



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆՈՒՆ

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿԼՕՐԵԱՅ ԹԵՐԹԿ



GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MONTREAL

ՄԱՅՐ ՏԱՋԱՐ

ԿԻՐԱԿԻ, 6 ԴԵՍԿՏԵՄԲԵՐ 2020

192

DIMANCHE, 6 Décembre 2020

Գ. Կիրակի Յիսնակի

3^{ème} Dimanche de l'Avent



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ
ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ
ԳՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԷՆ (1.1-12)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (14.12-24)

Les lectures de la Bible d'aujourd'hui

2 THESSALONICIENS: 1.1-12

LUC: 14.12-24

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ԱՐՇ. Տ. ԴԱԻԻԹ ՔԶՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
Հոգեւոր Հովիւ

Célébration et l'Homélie
RÉV. PÈRE DAVID MARGARYAN
Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն -	9:30-ին
Office Matines à	9h30
Ս. Պատարագ- ուղիղ սփռում -	10:30-ին
La Sainte Messe – En direct à	10h30
Հոգեհանգստեան	
յատուկ պաշտօն - ուղիղ սփռում- Ժամը	12:00-ին
Spécial Office Réquiem - En direct à	12h00

DIACRES – ACOLYTES

Organiste: Mme Houry Bedrossian

Chœur “Gomidass”

ԿՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES DE DIMANCHE



THE SUNDAY READINGS

ՀԹԵԱՂՈՒԿԵՑԻՆԵՐ 1.1-12

1Պօղոս, Սիդուանոս և Տիմոթեոս, Թեսաղոնիկեցիներու եկեղեցիին՝ Հայր Աստուծմով ու Տեր Յիսուս Քրիստոսով. 2Հնորիք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, ու Տեր Յիսուս Քրիստոսէ: Ամէն ատեն շնորհակալ կ'ըլլանք Աստուծմէ՝ ձեր բոլորին համար, յիշելով ձեզ մեր աղօթքներուն մէջ, 3անդադար յիշելով ձեր հաւատքին գործը, սիրոյ աշխատանքը, եւ մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի յոյսին համբերութիւնը՝ Աստուծոյ ու մեր Հօր առջեւ, 4գիտնալով՝ սիրելի եղբայրներ՝ թէ Աստուած ընտրեց ձեզ: 5Որովհետեւ մեր անտարանը բարոզուեցաւ ձեզի ո՛չ միայն խօսքով, այլ նաեւ գորութեամբ, Սուրբ Հոգիով ու լման վտահովութեամբ: Դո՛ւք ալ գիտէք թէ իՆչպէս կեցանք ձեր մէջ՝ ձեզի համար, 6եւ դուք նմանեցաք մեզի ու Տէրոջ, ընդունելով խօսքը շատ տառապանքի մէջ՝ Սուրբ Հոգիին ուրախութեամբ: 7Հետեւաբար դուք տիպար եղաք բոլոր հաւատացեալներուն՝ որ Մակեդոնիայի եւ Աքայիայի մէջ են, 8որովհետեւ ո՛չ միայն Մակեդոնիայի եւ Աքայիայի մէջ հռչակուեցաւ Տէրոջ խօսքը ձեզմէ, այլ նաեւ ամէն տեղ տարածուեցաւ Աստուծոյ վրայ ձեր ունեցած հաւատքը, այնպէս որ պէտք չունիք որեւէ բան խօսելու. 9բանի որ իրենք իրենցմէ կը պատմեն մեր մասին, թէ ինչպիսի՛ մուտք ունեցանք ձեր մէջ, եւ իՆչպէս դուք կուռքերէն դարձաք Աստուծոյ՝ ապրող ու ճշմարիտ Աստուծոյ ծառայելու համար, 10եւ երկինքէն սպասելու անոր Որդիին՝ որ ինք մեռելներէն յարուցանեց, այսինքն Յիսուսի, որ կ'ազատէ մեզ զայիք բարկութենէ:

ԱԲԵՏԱՐԱՆ ՀԱՏ ՂՈՒԿԱՍԻ 14.12-24

12Չիք հրաւիրողին ալ ըսաւ. «Երբ ճաշ կամ ընթրիք կը սարքես, մի՛ կանչեր բարեկամներդ, ո՛չ ալ եղբայրներդ. ո՛չ ազգականներդ, ո՛չ հարուստ դրացիներդ, որպէսզի անոնք ալ փոխարէնը չհրաւիրեն քեզ՝ ու հատուցում չըլլայ քեզի: 13Հապա երբ կոչունք կը սարքես՝ հրաւիրէ՛ աղքատները, պակասաւորները, կաղերը եւ կոյրերը, 14ու երանելի՛ պիտի ըլլաս, որովհետեւ անոնք չեն կրնար փոխարէնը հատուցանել քեզի. արդարեւ արդարներուն յարկութիւն առած ատենը փոխարէնը պիտի հատուցանուի քեզի»:

15Հետը սեղան նստողներէն մէկը, երբ լսեց ասիկա, ըսաւ անոր. «Երանի՛ անոր, որ հաց պիտի ուտէ Աստուծոյ թագաւորութեան մէջ»:

16Ինք ըսաւ անոր. «Մարդ մը սարքեց մեծ ընթրիք մը, ու հրաւիրեց շատ մարդիկ: 17Ընթրիքի ժամուն՝ դրկեց իր ծառան, որպէսզի ըսէ հրաւիրեալներուն. “Եկէ՛ք, որովհետեւ արդէն ամէն բան պատրաստ է”: 18Բոլորն ալ միաբերան սկսան հրաժարիլ: Առաջինը ըսաւ անոր. “Ես արտ մը գնեցի, եւ հարկ է որ մեկնիմ ու տեսնեմ գայն. կը խնդրեմ քեզմէ, հրաժարած նկատէ զիս”: 19Միւսը ըսաւ. “Հինգ զոյգ եզ գնեցի, եւ կ'երթամ որ փորձարկեմ գանոնք. կը խնդրեմ քեզմէ, հրաժարած նկատէ զիս”: 20Միւսը ըսաւ. “Կ'ուշ մը հետ ամուսնացայ. ուստի չեմ կրնար գալ”: 21Ծառան եկաւ ու պատմեց իր տիրոջ այս բաները: Այդ ատեն տանուտէրը բարկացաւ եւ ըսաւ իր ծառային. “Շուտ՛ով դուրս ելիր՝ դէպի բաղաքին հրապարակներն ու փողոցները, եւ հո՛ս բեր աղքատները, պակասաւորները, կաղերն ու կոյրերը”: 22Ծառան ալ ըսաւ. “Տէ՛ր, կատարուեցաւ ինչ որ հրամայեցիր, բայց տակաւին տեղ կայ”: 23Տէրը ըսաւ ծառային. “Դո՛ւրս ելիր դէպի ճամբաներուն գլուխներն ու ցանկապատերը, եւ հարկադրէ՛ գտածներդ՝ որ հոս մտնեն, որպէսզի տունս լեցուի”: 24Որովհետեւ, կ'ըսեմ ձեզի, այդ հրաւիրուած մարդոցմէն ո՛չ մէկը պիտի ճաշակէ իմ ընթրիքես»:

2 Thessaloniens 1.1-12

1Paul, et Silvain, et Timothée : à l'Église des Thessaloniens qui est en Dieu notre Père, et en [notre] Seigneur Jésus-Christ; 2Que la grâce et la paix vous soient données de la part de Dieu notre Père, et de la part du Seigneur Jésus-Christ. 3Mes frères, nous devons

toujours rendre grâces à Dieu à cause de vous, comme il est bien raisonnable, parce que votre foi s'augmente beaucoup, et que votre charité mutuelle fait des progrès. 4De sorte que nous-mêmes nous nous glorifions de vous dans les Eglises de Dieu, à cause de votre patience et de votre foi dans toutes vos persécutions, et dans les afflictions que vous soutenez;

5Qui sont une manifeste démonstration du juste jugement de Dieu; afin que vous soyez estimés dignes du Royaume de Dieu, pour lequel aussi vous souffrez. 6Puisque c'est une chose juste devant Dieu, qu'il rende l'affliction à ceux qui vous affligent; 7Et [qu'il vous donne] du relâche à vous qui êtes affligés, de même qu'à nous, lorsque le Seigneur Jésus sera révélé du Ciel avec les Anges de sa puissance; 8Avec des flammes de feu, exerçant la vengeance contre ceux qui ne connaissent point Dieu, et contre ceux qui n'obéissent point à l'Evangile de notre Seigneur Jésus-Christ; 9Lesquels seront punis d'une perdition éternelle, par la présence du Seigneur, et par la gloire de sa force; 10Quand il viendra pour être glorifié en ce jour-là dans ses saints, et pour être rendu admirable en tous ceux qui croient; parce que vous avez cru le témoignage que nous vous en avons rendu. 11C'est pourquoi nous prions toujours pour vous, que notre Dieu vous rende dignes de [sa] vocation, et qu'il accomplisse puissamment [en vous] tout le bon plaisir de sa bonté, et l'œuvre de la foi. 12Afin que le Nom de notre Seigneur Jésus-Christ soit glorifié en vous, et vous en lui, selon la grâce de notre Dieu, et du Seigneur Jésus-Christ.

Luc 14.12-24

12 Il disait aussi à celui qui l'avait convié : quand tu fais un dîner ou un souper, n'invite point tes amis, ni tes frères, ni tes parents, ni tes riches voisins; de peur qu'ils ne te convient à leur tour, et que la pareille ne te soit rendue. 13Mais quand tu feras un festin, convie les pauvres, les impotents, les boiteux et les aveugles; 14Et tu seras bienheureux de ce qu'ils n'ont pas de quoi te rendre la pareille; car la pareille te sera rendue en la résurrection des justes. 15Et un de ceux qui étaient à table, ayant entendu ces paroles, lui dit : bienheureux sera celui qui mangera du pain dans le Royaume de Dieu.

16Et [Jésus] dit : un homme fit un grand souper, et y convia beaucoup de gens. 17Et à l'heure du souper il envoya son serviteur pour dire aux conviés : venez, car tout est déjà prêt. 18Mais ils commencèrent tous unanimement à s'excuser. Le premier lui dit : j'ai acheté un héritage, et il me faut nécessairement partir pour l'aller voir; je te prie, tiens-moi pour excusé. 19Un autre dit : j'ai acheté cinq couples de bœufs, et je m'en vais les éprouver; je te prie, tiens-moi pour excusé. 20Et un autre dit : j'ai épousé une femme, c'est pourquoi je n'y puis aller. 21Ainsi le serviteur s'en retourna, et rapporta ces choses à son maître. Alors le père de famille tout en colère, dit à son serviteur : va-t'en promptement dans les places et dans les rues de la ville, et amène ici les pauvres, et les impotents, et les boiteux et les aveugles. 22Puis le serviteur dit : Maître, il a été fait ainsi que tu as commandé, et il y a encore de la place. 23Et le maître dit au serviteur : va dans les chemins et le long des haies, et [ceux que tu trouveras], contrains-les d'entrer, afin que ma maison soit remplie. 24Car je vous dis qu'aucun de ces hommes qui avaient été conviés ne goûtera de mon souper.



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔ

ԱՐՁԱԿՈՒՄ

(Մեղքերու թողութիւն, որ
կ'ըսէ քահանան)

Թող ամենազօր Տերը ողորմի քեզի
եւ թողութիւն շնորհէ քու բոլոր յանցանքներուդ,
եւ թէ՛ մոռցածներուդ:
Իսկ ես՝ քահանայական կարգիս իշխանութեամբ
եւ աստուածային հրամանին համաձայն՝ թէ «ինչ որ
երկրի վրայ արձակէք՝ երկինքի մէջ ալ
արձակուած պիտի ըլլայի,
Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով
կ'արձակեմ քեզ՝ մտածումով, խօսքով ու գործով
կատարած բոլոր մեղքերէդ,
եւ վերստին քեզ կը յանձնեմ
սուրբ Եկեղեցոյ խորհուրդներուն,
որպէսզի ինչ բարիք որ գործես՝ Աստուծոյ քով
բարեգործութիւն նկատուի քեզի համար
եւ հասնիս յաւիտենական կեանքի փառքին. Ամէն:

Absolution

(Donnée par le prêtre)


Que Dieu ami des hommes, te fasse miséricorde
et t'accorde la rémission et te pardonne toutes tes
transgressions, celles que tu as confessées
comme celles que tu as oubliées. Et moi, en vertu
de mon ordination au ministère sacerdotal,
conformément au commandement divin : <ce que
tu délieras sur terre sera délié dans les cieux >, je
te délie de toutes les péchés commis en pensée,
en paroles et en actes, au nom du Père, du Fils et
du Saint-Esprit et je te remets aux saints mystères
de l'Eglise afin que toutes les bonnes actions que
tu accompliras dorénavant contribuent à ton salut
et à ta gloire dans la vie éternelle. Amen.

ՏՕՆԵՐ

Շաբաթ, 5 Դեկտեմբեր 2019

**Ս. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԶՄԻՒՆԱՅԻ ԱՔԱՆՉԵԼԱԳՈՐԾԻ
ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՕՐ**

Ս. Նիկողայոս Չայրապետը ծնած է Փոքր Ասիոյ Լիկիա գաւառի Բաթարա քաղաքին մէջ (Ներկայիս Անթալիայի մօտակայքը): Փոքր հասակին կը կորսնցնէ մեծահարուստ եւ բարեպաշտ ծնողները եւ կը մեծնայ իր մօրեղբօր՝ Նիկողայոս Երեց եպիսկոպոսի խնամքին տակ: Աւետարանական պատգամը՝ «Վաճառիր ունեցուածքդ եւ բաժնէ աղքատներուն» (Խմմտ. Մտթ. ԺԹ 21), իր կեանքի Նշանաբանը կը դարձնէ՝ խնամելով աղքատները, հիւանդները, բանտարկեալները եւ որբերը: Ժողովուրդին կամքով կը դառնայ Զմիւռնիոյ եպիսկոպոսը: Հալածանքներու ընթացքին կ'աքսորուի, սակայն չի դադրիր ամենուր Աւետարանը քարոզել: Խաղաղութիւն վերահաստատուելուն պէս կը վերադառնայ իր աթոռը, մասնակցած է 325 թուականին Նիկիոյ Տիեզերաժողովին:



Ան մահացած է 326 թուականին: Ընդհանրական Եկեղեցւոյ ամենասիրուած սուրբերէն է՝ առաւելաբար յայտնի Սանտա Կլաուս անունով: Հայ Առաքելական Եկեղեցին Ս. Նիկողայոս Զմիւռնացի Աբանչելագործ հայրապետին յիշատակութեան տօնը կը նշէ երկու անգամ՝ Ս. Խաչի տասներորդ Կիրակիին յաջորդող շաբաթ օրը եւ Յիսնակի երկրորդ Կիրակիին յաջորդող Շաբաթ օրը:

Կիրակի, 6 Դեկտեմբեր 2019

ԲԱՐԵԿԵՆՂԱՆ Ս. ՅԱԿՈԲԻ ՊԱՅԹԻ

Բարեկենդան կը կոչուի շաբաթապահքերուն եւ Մեծ Պահքին Նախընթաց օրը: Բարեկենդանին կը թոյլատրուին չափաւոր վայելքներ, խրախճանքներ, խաղեր եւ ուտեստեղէններ՝ ի հետեւութիւն Եղիային ուղղուած հրեշտակի խօսքին. «Ելիր, կեր, որովհետեւ երկար ճամբայ պիտի երթաս» (Թագ. 19:7): «Բարեկենդան» բառացի իմաստով կը նշանակէ կենդանութիւն, բարի կեանք: Իսկ յաջորդ օրէն կը սկսի պահքը, որ կը տեսէ երկուշաբթիէն մինչեւ Ուրբաթ:



ԿԱՐԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

**Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ
ՀԱՍՏԱՏՈՒՄԸ, ՆՇԱՆԱԿՈՒԹՒՆԸ
ԵՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**



Արդեօք Գիտեի՞ք թե.-

Որո՞նք են Ս. Մկրտության Նախատիպերը Հին Կտակարանին մեջ:

4.Կարմիր ծովին հրեաներուն անցնիլը: Հրեաները Կարմիր ծովին անցնելով, փրկուեցան եգիպտական գերութենէն: Այս անցնումը կը խորհրդանշէ մեղքի ծառայութենէն փրկութեան անցնիլը, ուստի Ս. Պօղոս առաքեալը կ'ըսէ.

«Եղբայրներ՛ր, չեմ ուզեր, որ անգիտանաք, որ մեր հայրերը բոլորն ալ ամպին առաջնորդութեան տակ էին, եւ բոլորն ալ ծովէն անցան, եւ բոլորը, հետեւելով Մովսէսին, մկրտուեցան ամպին եւ ծովին մեջ» (Ա Կորնթ. 10. 1-2): Ըստ Յովհաննէս Երզնկացի Պլուզի՝ ծովը այստեղ կը խորհրդանշէ Աւագանին ջուրը, ամպը՝ Ս. հոգին, գաւազանն ալ խաչը,

Հեսու Նավէի առաջնորդութեամբ հրեաներուն անցնիլը Յորդանան գետէն (Հեսու 3.15-17): Ս. Յովհան Օծնեցիս եկեղեցոյ հիմնարկեքին նուիրուած ճառի մեջ զուգահեռ կերպով ի գործ կը դնէ եկեղեցոյ հիմքին մեջ դրուող 12 քարերուն, Իսրայելի 12 ցեղերուն եւ Յորդանանի անցնումէն ետք գետեղուած յիշատակութեան 12 քարերուն միջեւ: Ըստ անոր՝ 12 քարերը Տիրոջ 12 առաքեալներն են, որոնց Տէրը Ս. Մկրտութեան խորհուրդով պատուիրեց՝ բոլորին մկրտելու Ս. Երրորդութեան անունով:

Նեեման Ասորիի բժշկումը: Եղիսէ մարգարէի յորդորով Նեեման Ասորին եօթը անգամ թաթխուեցաւ Յորդանան գետին մեջ եւ մաքրուեցաւ բորոտութենէն (Դ Թագ. 5.14): Աստուածաշունչի Եօթանասնից թարգմանութեան մեջ այստեղ օգտագործուած է յունարէն *να βαπτίσει* բայը, որ մեր Ս. Թարգմանիչները թարգմանած են « մկրտել » բառով: Ըստ Ս. Եփրեմ Ասորիին (306-373) եւ Տէրտուղիանոսին (2-3-րդ դդ.)՝ այս հատուածին մեջ կ'ակնարկուի հեթանոսներու մկրտութեան մասին:

Ո՞րն է Ս. Մկրտութեան Նախատիպը Նոր Կտակարանին մեջ:

Ս. Յովհաննէս Մկրտիչին կատարած մկրտութիւնները պաշխարութեան համար են: Ան միայն Յորդանան գետին մեջ մկրտեց Յիսուսին: Ըստ Սրբազան Աւանդութեան՝ ինչպէս Քրիստոս ծնաւ Յունուար 6-ին Բեթղեհեմի մեջ, այնպէս ալ 30 տարի ետք՝ նոյն օրը մկրտուեցաւ: Այս է պատճառը, որ Հայոց Եկեղեցին, հաւատարիմ մնալով Վաղ Եկեղեցոյ Աւանդութեան, դարեր շարունակ Յունուար 6-ին կը նշէ Մեր Տիրոջ եւ Փրկիչին՝ Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնը, իսկ Ս. Պատարագի վերջաւորութեան կը կատարէ ջրօրինեք՝ ի յիշատակ Յորդանանի մեջ Տիրոջ Մկրտութեան:

Շաբթուայ խորհրդածութիւններ



Եթէ ձախողիս, խնարհ եղիր, որոշում կայացուր
հնազանդ ըլլալ Աստուծոյ կամքին, այնուհետեւ ոտքի
կանգնէ եւ շարունակէ:

Ս. Հայր Պիո

If you fail, be humble, decide to obey God's will, then
stand up and continue.

St. Father Pio

Շատ հեռու մի նայիր, եւ եթէ ամէն օր ապրիս Աստուծոյ
հետ եւ աղօթքով, Տէրը կ'առաջնորդէ կեանքիդ
նաւակը եւ կ'ուղղէ այդ դէպի փրկութիւն:

Իոանն վրդ. Կրեստյանկին

Don't look too far, and if you live with God and pray every
day, the Lord will lead the boat of your life and lead it to
salvation.

Fr. Ioan Krestyanki

խնարհող մեղաւորները առանց բարի գործերու ալ
կ'արդարանան, իսկ արդարները, իրենց ձեռք բերածն
ալ կը կորսնցնեն հպարտութեան պատճառով:

Ս. Յովհան Ոսկերբերան

The humble guilty are also justified without good deeds,
and the righteous lose what they have acquired because
of pride.

St. Hovhan Voskeberan

ՀՈԳԵՀԱՆԳԱՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL



ՀՈԳԵՀԱՆԳԻՍ ԿԻՐԱԿԻ, 6 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020

Առաջնորդ սրբազան հոր թելադրանքով եւ Նախաձեռնութեամբ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին եւ Ծխական Խորհուրդին հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի յանուն Հայրենիքի ազատութեան տեղի ունեցող Արցախի ճակատամարտին մեր քաջարի զինծառայող հերոսներու յաւէտ յիշատակին:

Նորոգ հանգուցեալներ`

**Պահեստագորային Մանուկյան Արթուր Տիգրանի,
ծնվ. 1994թ.**

Թովմասյան Տիգրան Մերյոժայի, ծնվ. 1998թ.

Դունամայան Միշա Վարդանի, ծնվ. 2000թ.

Աբրահամյան Սարգիս Գյորգի, ծնվ. 1999թ.

Սահակյան Մերուժան Ռուբենի, ծնվ. 2001թ.

Գրիգորյան Դավիթ Մանվելի, ծնվ. 2000թ.

Մելքոնյան Նարեկ Վարդանի, ծնվ. 2000թ.

Աղվանյան Արման Սանասարի, ծնվ. 2000թ.

Կիրակոսյան Էդիկ Գագիկի, ծնվ. 2000թ.

Հարությունյան Համլետ Արագածի, ծնվ. 2001թ.

Խաչատրյան Արտյոմ Խաչատուրի, ծնվ. 2001թ.

Ասատրյան Գեւորգ Վանիկի, ծնվ. 2002թ.

Պետրոսյան Վարդան Արմենի, ծնվ. 2000թ.

Գրիգորյան Դավիթ Գոհարի, ծնվ. 2000թ.

Դանիելյան Դանիել Արայի, ծնվ. 2000թ.

Կիզիրանց Գարիկ Զաքիկի, ծնվ. 2000թ.

Տոնոյան Մեխակ Հարությունի, ծնվ. 2000թ.

Պահեստագորային Մելիքյան Պողոս Խաչիկի, ծնվ. 1997թ.

**Պահեստագորային Գրիգորյան Սարգիս Թաթուլի,
ծնվ. 1985թ.**

Պահեստագորային Հովսեփյան Օնիկ Զամբուլատի,

ծնվ. 1989թ.

Պահեստագորային Գրիգորյան Գրիշա Յենրիկի, ծնվ. 1992թ.

Պահեստագորային Կարապետյան Վահե Արթուրի,
ծնվ. 1993թ.

Պահեստագորային Առուստամյան Մխիթար Միրզայի,
ծնվ. 1977թ.

Պահեստագորային Դանիելյան Մարատ Ռոմայի,
ծնվ. 1983թ.

Պահեստագորային Ավետիսյան Սարգիս Պողոսի,
ծնվ. 1993թ.

Պահեստագորային Մնացականյան Ռոբերտ Բորիսի,
ծնվ. 1996թ.

Պահեստագորային Ավետիսյան Սարգիս Յրաչայի,
ծնվ. 1998թ.

Պահեստագորային Ներկարարյան Յովհանես Յովհաննեսի,
ծնվ. 1978թ.

Պահեստագորային Բաբայան Արթուր Սուրենի, ծնվ. 1982թ.

Պահեստագորային Արզումանյան Միքայել Վահրամի,
ծնվ. 1996թ.

Կամավորական Բաբայան Ռուանդ Վուրդյայի,
ծնվ. 1960թ.

Կամավորական Ասատրյան Արայիկ Երջանիկի, ծնվ. 1969թ.

Կամավորական Կարապետյան Արսեն Գուրգենի,
ծնվ. 1998թ.

Կամավորական Պողոսյան Վարդան Գառնիկի,
ծնվ. 1979թ.

Յոզփներուն ի հանգիստ



Տիկ. Սիրուհի Սումպուլեան

Օրդ. Սիւզի Սումպուլեան

Պրն. Սերժ Սումպուլեան

Ուիլելմ եւ Քէթրին Սումպուլեաններ
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն
իրենց սիրեցեալ ամուսնոյն, հոր եւ մեծ հոր`

ԳԵՂԱՄ ՍՈՒՄՊՈՒԼԵԱՆԻ

(KEGHAM SUMBULIAN)

Մահուան առաջին տարելիցին առիթով



Տ. Ե. Տիկ. Վարուժան Եւ Սիլվա (Ճիկերեան) Մանկասարեան
Եւ հարազատներ՝

հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն իրենց
սիրեցեալ եղբօր Եւ ծնողաց՝

ՌԱՖՖԻ ԾԻԿԵՐԵԱՆԻ

(RAFFI JIKERIAN)

(Մահացած Պէյրուզ-Լիբանան)

Մահուան 40-ին առիթով:

Ինչպէս նաեւ՝

իրենց սիրեցեալ ծնողաց՝

ԴԱՆԻԷԼ ԵՒ ԵՐԱՆՈՒԻԻ

ՃԻԿԵՐԵԱՆ (ՍԻԼԻԻԲԵՃԵԱՆԻ)

(TANIEL & YERANOUHIE JIKERIAN SULUKJIAN)

Մահուան 21-րդ տարելիցին առիթով

Եւ մօրեղբոր

ՉՕՐԱՎԱՐ

ԱՐԱՄ ՍԻԼԻԻԲԵՃԵԱՆԻ

GENERAL

(ARAM SULUKJIAN)

մահուան 41-րդ տարելիցին առիթով:

Ինչպէս նաեւ՝

ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ, ԾԻԿԵՐԵԱՆ, ՍԻԼԻԻԲԵՃԵԱՆ

ԵՒ ՇԱՄՄԱՍԵԱՆ

Գերդաստաններու համայն ննջեցելոց

հոգիներուն ի անգիստ



Տիկ. Լիւսի Մղտեսեան

Տ. Ե. Տիկ. Մկրտիչ Եւ Թալին Մղտեսեան

Եւ զաւակները՝ Նարօս Եւ Տարօն

Տ. Ե. Տիկ. Ռաֆֆի Եւ Անի Մղտեսեան

Եւ զաւակները՝ Դանիէլ, Արեք Եւ Սեւանայ

հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն իրենց

սիրեցեալ ամուսնոյն, հօր Եւ մեծ հօր՝

ՆՇԱՆ ՄՂՏԵՍԵԱՆԻ

(NISAN MIGDESYAN)

Մահուան 16-րդ տարելիցին առիթով:

Ինչպէս նաեւ՝

ՄՂՏԵՍԵԱՆ, ԳԱՍԲԱՐԵԱՆ, ՓԵԼԹԷՔԵԱՆ

ԵՐ ՄԻՔԷԼ

Գերդաստաններու համայն ննջեցելոց
հոգիներուն ի անգիստ



Տիկ. Մայտա ՏԵՐ Վարդանեան
Եւ զաւակները՝ Սաֆօ Եւ Յակօբ Օրոյեաններ
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն իրենց
սիրեցեալ ամուսնոյն Եւ հօր՝

ՎԱՐԴԵՍ ՕՐՈՅԵԱՆԻ
(VARTKES OROIAN)

(մահացած Պէյրուժ-Լիբանան)
Մահուան 4-րդ տարելիցին առիթով:



Տիկ. Յասմիկ Խաչիկեան
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրէ իր
սիրեցեալ հարազատներուն՝

ԽԱՉԻԿ ԽԱՉԻԿԵԱՆԻ
(KHATCHIK KHATCHIKIAN)

ԱՐՄԷՆ ՄԵԼՔՈՆԵԱՆԻ
(ARMEN MELKONIAN)

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԵՐ ՌՕՉ
ԲԱՍՔԱԼԵԱՆՆԵՐՈՒ
(HOVHANNES & ROSE PASKALIAN)

Յոգիներուն ի հանգիստ



Տիկ. Հանրմ Սօզքէս
Տ. Եւ Տիկ. Գեորգ Եւ Մանուշակ Միրզայեան Եւ ընտանիք
Տ. Եւ Տիկ. Մարտիրոս Սօզքէս Պաղտասարեան
Եւ համայն ճերեճեան Եւ Մանուկեան ընտանիքներ
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրէ իրենց
սիրեցեալ ամուսնոյն, հօր Եւ մեծ հօր՝

ԳՐԻԳՈՐ
ՍՕՉՔԵՍ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ
(KRIKOR SOZKES BAGHDASSARIAN)

Մահուան 3-րդ տարելիցին առիթով:



ՆՈՒԻՐԱՏՈՒՌԻԹԻՒՆ ԵՎԵՂԵՅԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

**Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal, QC Donations of
November / December
have been received with great appreciation 2020**

CHURCH:

Mr. Vant Tashdjian & Family \$1500
Mr. Varoujan Kerdian \$2000
Mr. & Mrs. Stephan Yazedjian \$400
Me Hrair Djihanian \$100
Mr. Herman Yuruten \$100

FOR A VOW:

Mr. & Mrs. Suren & Natya Sirinian \$100

RENOVATION FUND:

Mr. & Mrs. Robert & Zaruhi Kechayan \$100

ARTZAKH HUMANITARIAN FUND:

Mr. Vant Tashdjian & Family \$1500
Association Sportive Homenmen \$330

HOKEHANKISD:

THE LATE NUBAR BALI & LEILA MOUTRANI BALI:

Mrs. Sonia Ternamian \$200

THE LATE MARCELLO APARDIAN:

Mr. Robert Aparadia \$200

THE LATE TAKOUHIE MEGUERDITCHIAN SAIYAN

& GARABED MARDIROS SAIYAN:

Mr. & Mrs. Antrank & Irina Saiyan \$100
Mr. & Mrs. Terenik Saiyan \$100
Mr. & Mrs. Paul & Garine Hanenian \$100
Mrs. Serpouhi Saiyan \$100

THE LATE PAPAZIAN FAMILY:

Mr. & Mrs. Levon & Anna Afeyan \$100

THE LATE MARASHLIAN FAMILY:

Mr. & Mrs. David & Ardemis Fisher \$100

THE LATE HASMIK & GIORGY TER-STEPANIAN:

Mrs. Karine Ter-Stepanian \$150

THE LATE KHATCHIK KHATCHIKIAN:

Mrs. Hasmig Khatchikian \$25

Հայկական Խոհանոց / Armenian Kitchen

Gluten-Free Armenian Eech

- 1/2 cup extra virgin olive oil
- 2 medium vidalio onions diced
- 1 tsp Sea Salt
- 1/2 tsp Black Pepper
- 1 28 oz can organic crushed tomatoes I use Muir Glen
- 2 cups quinoa
- 3 cups water
- 1/2 cup fresh squeezed lemon juice or 2 lemons
- 2 red peppers chopped
- parsley chopped, to taste
- 4-5 Scallions chopped



Instructions

1. In a large pot with a cover, sauté the onions in the olive oil until soft.
2. Add sea salt, pepper, full can of crushed tomatoes, quinoa, and water.
3. Bring to a boil, then reduce to simmer and cover.
Cooking time will be between 20-25 minutes, depending on your heat.
Mix periodically and check at 20 minutes.
There will still be a little liquid left. That will thicken as it cools.
4. Transfer to a bowl to let cool to room temperature.
If you're in a rush, you can put in the fridge to cool.
5. Once cooled, add the lemon juice, red peppers, parsley and scallions.
6. This will keep in the fridge for up to a week. Great to make the night before to let the flavors sit.
7. Enjoy!



Fundraising for our Church and Artsakh

Organised by Saint Gregory Armenian Apostolic church
Parish council and ACYOC „Kamar,, youth union
committee

BAKE SALE

Sunday, Dec 6, 2020

From 11:00-15:00

Take out hot meals



Harissa (porridge with
chicken and wheat)



Carrot salad
with pomegranate
and apple



Potato patties with meat
filling and vegetables

Appetizers and desserts

As well as various kinds of home made
pastries and biscuits



Nazoug



Cheese pockets
(Bereg)



Khachapouri
(Halloumi and
Mozzarella filled bread)



lavash



Napoleon



Honey cake

Masks are mandatory
& keep 2 meter
distance

For your orders please call Shoushan
(514)591-5393, Maral (514) 279-3066
Saint Gregory Armenian Apostolic Church of
Montreal 615 Avenue Stuart
Outremont, QC H2V 3H2

Delivery in Montreal and Laval available for
purchases over \$100



Brioche



ՅՈՅՄԻ ԿԱՆՔԵՂ ՆՈՐ ՏԱՐՈՒԿՑ ՍԵՄԻՆ

Ամանորի գիշերը խորհրդանշող լուսաշող այս Կանթեղը, որուն յոյսի լույսը սկիզբ պիտի առնէ Մոկթբեյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդակիստ Մայր Տաճարէն ճիշդ կէս գիշերին, յատուկ «Գոհաբանական Մաղթանք»-ի արարողութեան ազդարարմամբ, եւ որուն օրհնեալ լուսարձակ ճրագին շողերը յո՛յս պիտի ներշնչեն հաւատքով եւ սիրով լեցուելու, 2021 տարին դիմաւորելու խաղաղութեան, ապահովութեան եւ աստուածային օրհնութեան մէջ:

Արդ, տօնական այս առիթով կը հրաւիրենք մեր հաւատացեալները մասնակցելու եւ Յոյսի Կանթեղները վառելու «Գոհաբանական Մաղթանք»-ի ընթացքին, սիրելով յոյսի, հաւատքի եւ կեանքի օրհնեալ լույսը ներթափանցելու Ձեր տուներէն ներս:

Արարողութեան կարելի է հետեւիլ եւ միայժամանակ Յոյսի Կանթեղին ճրագը վառել եկեղեցու դիմատետրի ուղիղ սփռումով:

 Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Տօնական խորհրդաւոր այս առիթը թող ըլլայ ներշնչող եւ Յո՛յս մեր գերեալ որդիներուն վերջնական վերադարձին, Յո՛յս մեր անհետ կորածներու վերագտնումին, Յո՛յս վիրաւոր զինուորներու շուտափոյոջ ապաքինումին, Յո՛յս Յայրենիքի եւ Արցախի աշխարհի տարածքային վերականգնումին, Յո՛յս մայրերուն իրենց զինուորագրեալ զաւակներու տուն դարձի գրկախառնումին, Յո՛յս նահատակ հերոսներուն երկնային գօրբերու միացումին, ի վերջոյ յո՛յս մեր Յայ ժողովուրդի գոյատեւման պայքարին:

Միրելի հաւատացեալներ, Յոյսի Կանթեղ ձեռք բերելու եւ յաւելեալ մանրամասնութիւններու համար կապ հաստատել եկեղեցու թարուղարութեան հետ հեռաձայնելով (514)279-3066 թիւին:

Առ ի մխիթարութիւն մեր հաւատացելոց կը յայտնենք, որ Յոյսի Կանթեղին հետ միատեղ կը տրամադրուի Բժշկութեան եռալեզու աղօթագիրք:

Լշե՛նք, որ ՅՈՅՄԻ ԿԱՆՔԵՂՆԵՐԷՆ գոյացած ողջ հասոյթը պիտի նուիրաբերուի մեր Սուրբ եւ Մայր Եկեղեցիին :

«Եւ յոյսը ամօթահար չ'ընէր, որովհետեւ Աստուծոյ սերը մեր սիրտերուն մէջ սփռուած է Սուրբ Գոգիին միջոցով՝ որ տրուեցաւ մեզի»:
(Հռովմ. 5:5)

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ



LAMP OF HOPE ON THE THRESHOLD OF THE NEW YEAR'S EVE

This luminous lamp symbolizing New Year's Eve, the light of hope will begin to lit up from St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal at midnight, announcing the special "Thanksgiving Wish" ceremony, whose blessed lights will inspire hope to be filled with faith and love, to meet the year 2021 in peace, security and divine blessing.

Now, on this festive occasion, we invite our faithful to participate and light the Candle Lamp of Hope during the "Thanksgiving Wish", spreading the blessed light of hope, faith, and life into your homes.

The ceremony can be followed and at the same time, the Lamp of Hope Candle will be lit up followed by the Church Facebook-Live.

 Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Let this symbolic holiday occasion be inspiring and
Hope for the final return of our captive sons,
Hope for the discovery of our missing soldiers,
Hope for the speedy recovery of our injured soldiers,
Hope for the regional restoration of our Homeland and Artsakh,
Hope for the mothers to embrace their enlisted children,
Hope for the victim heroes who joined the heavenly troops,
Finally, hope for the struggle for the survival of our Armenian people.

Dear faithful,

To acquire the Lamp of Hope Candle and for more information, contact the Church Secretariat at (514)279-3066.

We would like to inform our parishioners that a trilingual prayer book of Medicine is provided together with the Lamp of Hope Candle for consolation.

All proceeds from the Lamp of Hope Candles will be donated to our Church glory.

"And hope does not put us to shame, because God's love has been poured out into our hearts through the Holy Spirit, who has been given to us" (Rom. 5: 5)

CHURCH OFFICE



ՆՈՐՅԼԵՔ

**Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Մայր Տաճարի**

Ուրբաթ, 1 Յունուար 2021
առաւօտեան ժամը 11:00-ին

Ամանորեայ Սուրբ եւ Ամմահ Պատարագ

Պատարագիչ եւ քարոզիչ`

Արժ. Տէր Դաւիթ քհնյ. Մարգարեան

Յաւարտ Սուրբ Պատարագի տեղի պիտի ունենայ

(13:00-ին) Նոթրինէքի արարողութիւն եւ բաշխուի մեր հայազն
հաւատացելոց:

Բոլորդ սիրով կը հրաւիրենք աղօթակից ըլլալու 2021-ի անդրանիկ
Պատարագին եւ մասնակից` Նոթրինէաց բացառիկ կարգին:

Բոլորիդ ներկայութիւնը եւ աղօթքըը ցանկալի են:

ՇՆՈՐՀԱԽՐ ԱՍԱՆՈՐ ԵՒ ԳԱԼԷ ՍՈՒՐԲ ՇՆՈՒՆԴ

Յոգեւոր հովիւ եւ Ծխական խորհուրդ

**Cathédrale Arménienne St. Grégoire l'Illuminateur
La bénédiction des Grenades**

Première Messe de l'An,
Vendredi, 1er janvier 2021 à 11 heures
Celebration et homélie par
le Rév. Père David Margaryan

Par la suite, la cérémonie de la bénédiction des Grenades
et la distribution aux fidèles aura lieu à 13 heures

Vous êtes cordialement invités à participer à ces célébrations pour
augurer un nouvel an de paix et de prospérité.

Votre présence et vos prières sont sollicitées.

Le prêtre et le Conseil paroissial





**ՄԱՍՆԱԿՑԻՆՔ ՀԱՅՈՑ ԶԱԶԱՄԱՐՏԻԿՆԵՐՈՒՆ
ՑԱՆՈՒՆ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻԻԷ ԵՒ ԱՐՑԱԽԻ
ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ**

Մայր Հայրենիքի եւ ի մասնաւորի Արցախի դիմագրաւած դժնդակ իրավիճակներուն, համեստօրէն կը խնդրենք մեր սիրալիր հաւատացեալներէն, որպէս սփիւռքահայեր բերել մեր հնարաւորութիւններն ու ջանքերը մէկտեղելու վասն մեր Մայր Հայրենիքի եւ Արցախի փրկութեան եւ ազատագրութեան:

**Ձեր մասնակցութեան համար
Կարելի է հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ եւ
կամ հետեւեալ**

անմիջական թիւերէն մէկուն՝

Եկեղեցւոյ գրասենեակ (514) 279-3066
Պատասխանատու անձերուն՝
(514) 865-3911, (514)825-5612 եւ (514)792-2866:

Կարելի է այցելել նաեւ՝ Եկեղեցւոյ կայքէջը
Website: Saintgregory.ca կամ armenianchurch.ca –
Artzakh Humanitarian Fund

Faire un don



Նուիրատուութեան դիմաց – ստանալ տուրքէ զերծ ստացագիր:

Իւրաքանչիւր Հայորդի իր մասնակցութեամբ կ'արտայայտէ իր ազգային գիտակցութիւնն ու հայրենասիրական պարտաւորութիւնը ի գին հայրենի հողին փրկութեան:

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 - Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008

stgregorychurch@gmail.com



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ԱՄԵՆԱՄԵԱՅ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Ուղիղ հեռարձակում – En direct



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Շաբաթ, 26 Դեկտեմբեր 2020

Ժամերգութիւն - երեկոյեան ժամը՝ 5-ին:

**«Ուստի կը յայտարարեմ ձեզի. “Ի՛նչ որ կը խնդրէք աղօթքով,
հաւատացէ՛ք թէ պիտի ստանաք, ու պիտի ըլլայ ձեզի”
(Ղուկ. 11:24):**

Samedi, le 26 Décembre 2020

Office du soir à 17h00.

**“C'est pourquoi je vous dis : tout ce que vous demandez en priant,
croyez que vous le recevrez, et il vous sera fait”
(Marc 11 :24).**



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ ԵՒ ԵՐԵԿՈՅԵԱԸ
ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Ուղիղ Հեռարձակում – Live



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Հաւատք, Մեր, Լոյս
Եւ Կեանք:

Ամեն Չորեքշաբթի

1 Հոկտեմբեր 2020 սկսեալ երեկոյեան ժամը 5:00-ին:

Արժ. Տ. Դաւիթ Զինյ. Մարգարեանի հետ:

MESSAGE SPIRITUELLE
ET SERVICE DU SOIR

avec le R.P. David Margaryan

Chaque Mercredi

à partir du 1^{er} Octobre 2020 à 17h00.

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները մասնակից
ըլլալու Աստուածաշնչական նիւթերուն
առցանց եկեղեցոյ դիմատետրի էջով:

Nous invitons nos chers fidèles à participer à ces séances
d'interprétations bibliques via la page Facebook de l'Église.

Հաճելի հոգեւոր պահեր կը մաղթենք մեր հետեւորդ
հաւատացեալներուն:

Nous souhaitons a nos fidèles des moments spirituels
agréables.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ՅՈՒՂԱՐԿԱԴՐՈՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱԶՄԱՎԵՐՊՈՒՄ




Այս յայտարարութեամբ կը փափաքինք մեր հաւատացեալներուն ուշադրութեան յանձնել թէ՛ Յուդարկաւորութեան կարգի ծրագրաւորման պարագային, նախքան որեւէ այլ գործընթացի ձեռնարկելը, համեստօրէն կը խնդրուի առաջին հերթին հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ եւ ժամադրուի հոգեւոր հովիւին հետ խորհրդակցութեան համար, որպէսզի ճշգրտօրէն կատարուին այն նախաձեռնութիւնները, որոնք պիտի կիրարկուին ըստ հանգուցեալի ընտանեկան պարագաներու յարմարութեան իրավիճակին:

Անգամ մը եւս կը փափաքինք շեշտել, Եկեղեցւոյ ծառայութեան մատուցման կարելորութիւնն ու առաջնահերթութիւնը, որպէսզի կարենանք պատշաճօրէն կիրարկել մեր Եկեղեցապատկան ծառայութիւնը, զերծ մնալով որեւէ թիւրիմացութենէ եւ անպատեհ շարժառիթէ, օրինակ՝ դիակիզումի պարագային, յուդարկաւորութեան կարգը կը մատուցուի նախքան հրկիզումը, այլապէս, հրկիզուած մոխիրին վրայ արտօնուած չէ յուդարկաւորութեան կարգ կատարել որեւէ մէկ ձեւով, ըստ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ծիսակատարութեան կանոններուն:

Հետեւաբար, մեր յորդորն է անմիջապէս կապ հաստատել Եկեղեցւոյ գրասենեակին հետ, հեռաձայնելով՝ (514) 279-3066 թիւին, կազմակերպելու յուդարկաւորութեան կարգին հետ առնչուող հարկ եղած կարգաւորումները:

ԵՎԵՆԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ



ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Մեր հաւատացեալներուն կը յայտնենք, թէ համաճայն Քեպէք Նահանգի առողջապահութեան Նախարարին՝ Մոնթրէալի շրջանը վտանգուած է թագաժահրի Covid-19 կարմիր գօտիի զգուշացման հանգրուանով, որուն որպէս հետեւանք խմբային հաւաքականութեան թողարկման թիւը՝ կրճատուած է հասնելով **25 հոգիի**, եւ պարտադրուելով ձեռք առնել առողջապահութեան բոլոր քայլերն ու միջոցները:

Նկատի առնելով համաճարակի ներկայ ընթացքը **առժամաբար կը դադրեցնենք «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ, կատարուող բոլոր տեսակի հիւրասիրութիւններն ու հաւաքները մինչեւ նոր տնօրինութիւն:**

Ձեզ կը մաղթենք առողջութիւն եւ ամենայն բարիք եւ յոյս կը յայտնենք, որ յառաջիկայի փոփոխութիւններու եւ այլ մանրամասնութիւններու պարագային գրաւոր ձեզ տեղեակ պահել:

Ձերձ մնալ եկեղեցի յաճախելէ նկատի ունենալով հետեւեալ պարագաները.

1. Բոլոր այն անձինք, որոնք հիւանդանալու բարձր հակամետոքիւն ունին:
2. Ձեր անմիջական շրջանակին կամ ընտանիքին մէջ ոեւէ մէկը վարակուած է Թագաժահր Covid-19-ով եւ կամ ունին հետեւեալ ախտաշանները՝

- Ձերմութիւն
- Հազ
- Կոկորդի ցաւ
- Հոտարկութեան կամ համի զգայի պակաս

եւ կամ կատարած են Քեպէք Նահանգէն դուրս ճամբորդութիւն:

Ձեզ կը մաղթենք առողջութիւն եւ ամենայն բարիք եւ յոյս կը յայտնենք, որ յառաջիկայի փոփոխութիւններու եւ այլ մանրամասնութիւններու պարագային գրաւոր ձեզ տեղեակ պահել:

Կարելի է նաեւ անցանց նուիրատուութիւններ կատարել այցելելով
Եկեղեցւոյ կայքէջը՝ saintgregory.ca

Faire un don



ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԿԿ



AVERTISSEMENT

Nous informons nos fidèles que selon le Ministre de la Santé et le Directeur de la Santé publique, la région de Montréal se trouve en zone rouge de la pandémie coronavirus Covid-19. Par conséquent le nombre de fidèles assistant aux offices religieux est limité à **25 personnes**. Compte tenu de l'évolution actuelle de la pandémie, **nous suspendons temporairement tous types de réceptions et rassemblements dans la salle « Vatché Hovsepian ».**

Nous vous souhaitons santé, bien-être et espérons vous tenir informé de tout changement futur ou d'autres détails.

S'abstenir d'aller à l'église

1- Tous ceux qui ont un risque élevé de tomber malade.
2- Si quelqu'un dans votre environnement immédiat ou un membre de votre famille est actuellement infecté par le covid-19 et/ou présente les symptômes suivants :

- Fièvre
- Toux
- Mal de gorge
- Perte de l'odorat ou du goût
ou a voyagé en dehors du Province de Québec

Vous pouvez également faire des dons en ligne en visitant le site web de l'église saintgregory.ca

Faire un don



BUREAU DE L'ÉGLISE